Հավելված
**ՀՀՊԾ-ԳՀԱՇՁԲ-25/27** ծածկագրով գնման
ընթացակարգի գնահատող հանձնաժողովի
2026թ. հունվարի 7-ի N 3 արձանագրության

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին**

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ՀՀՊԾ-ԳՀԱՇՁԲ-25/27**

ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար աշխատասենյակի վերանորգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՊԾ-ԳՀԱՇՁԲ-25/27 ծածկագրով գնման ընթացակարգը չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին տեղեկատվությունը՝

| Չափաբաժնի համար | Գնման առարկայի համառոտ նկարագրություն | Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝ այդպիսիք լինելու դեպքում | Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի /ընդգծել համապատասխան տողը/ | Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն |
|---|---|---|---|---|
| 1 | ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1 հասցեում գտնվող ԱՆ Պրոբացիայի ծառայության աշխատասենյակների վերանորոգման աշխատանքներ | «ՆԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ 2025» ՍՊԸ<br>ԿԻՄ ՍՊԸ<br>ՋԱՏԵԳ ՍՊԸ<br>"Բազիս 2025" ՍՊԸ<br>Ա/Ձ Լիլիթ Մալխասյան | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>**4-րդ կետի** | Ընթացակարգի հրավերով սահմանված աշխատանքի կատարման դիմաց վճարումները նախատեսված էին իրականացվելու 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին, սակայն հաղթող մասնակցին՝ «ՆԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ 2025» ՍՊԸ-ին, պայմանագիրը ծանուցվել է 2025 թվականի դեկտեմբերի 24-ին, իսկ աշխատանքների կատարումը սահմանված է «պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում»: Ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու ժամկետները նախատեսված են ընթացակարգի հրավերի 10.1 կետով՝ որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | պարտավոր է ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումներ: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է որակավորման և պայմանագրի ապահովումները: Այդպիսով, աշխատանքների կատարումն ու համապատասխան վճարումները ենթակա էին իրականացման 2026 թվականին, մինչդեռ ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության 2026 թվականի բյուջեով նշված գումարը չի նախատեսվել, ինչի արդյունքում աշխատանքը կատարելու դեպքում, դրա դիմաց վճարումներ չեն կարող իրականացվել: Հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովը որոշեց. «ՆԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ 2025» ՍՊԸ-ի հետ պայմանագիր չկնքել: |

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանվում է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀՊԾ-ԳՀԱՇՁԲ-25/27 ծածկագրով գնումների համակարգող՝ Վ. Էլոյանին:

Հեռախոս՝ +374 98 389689 (ներքին հեռախոսահամար՝ 05)
Էլ. փոստ՝ a.arakelyan@promotion.am
Պատվիրատու՝ ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայություն